Հավելված
ՀՀ կառավարության ……-ի
N ……որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

ՄԱ ԿԱՐ ԴԱԿ	ՈՐԱԿԱՎՈ ՐՈՒՄՆԵՐ	ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ		
		Գիտելիքներ	**Հմտություններ**	**Կարողություններ**
1	**Տարրական կրթություն**	Տարրական գիտե-լիքներ՝ կապված գրելու, կարդալու, թվաբանա-կան պարզ գործողու-թյուններ կատարելու, ճանաչողական ունակու-թյունների հետ, որ պահանջվում են պարզ ուսումնական առաջա-դրանքներ կատարելու և որոշակի շաբլոնային խնդիրներ լուծելու համար:	Նախնական տարրական հմտություններ, որոնք պահանջվում են ծանոթ միջավայրում՝ ձեռքով կամ ձեռքի պարզ գործիքներով պարզ, միակողապար առա-ջադրանքներ և գործողութ-յուններ կատարելու (քանդել, հավաքել, մաքրել, կտրել, տեղափոխել և այլն), անհրա-ժեշտ տեղեկատվությունն ընտրելու և օգտագործելու, կատարված աշխատանքը ներկայացնելու համար:	Անմիջական վերահսկողության ներքո ծանոթ և հստակ սահմանված պայմաններում մասնակցել իրակա-նացվող պարզագույն աշխատանքին կամ ուսուցմանը, կատարել պար-զագույն գործողություններ համա-կարգիչով, Օտար լեզվով ներկա-յացնել իրեն և մյուսներին, հարցնել և պատասխանել անձնական բնույթի հարցերին, օրինակ՝ որտեղ է ապրում, ում է ճանաչում և այլն:
2	**Հիմնական կրթություն**	Հիմնարար բազային գի-տելիքներ մասնագիտա-կան ուղղվածություն չպահանջող աշխատան-քի կամ ուսումնառու-թյան կոնկրետ բնագա-վառում, որ անհրաժեշտ են պարզ խնդիրներ	Ճանաչողական և գործնա-կան բնույթի բազային հմտություններ, որ նպատա-կաուղղված են՝ ա) առաջադրանքի կատար-մանը և առօրյա խնդիրների լուծմանն այնպիսի պարզ կանոնների և գործիքների	Անմիջական վերահսկողության ներ-քո, ծանոթ և հստակ սահմանված պայմաններում իրականացվող աշխատանք կամ ուսում՝ որոշ աս-տիճանի ինքնուրույնության, կա-տարված պարզ, շաբլոնային առաջադրանքների ու գործողու-թյունների համար պատասխանա-տվության դրսևորմամբ:

		լուծելու համար:	օգտագործման միջոցով, որոնց համար մասնագիտա-կան ուղղվածություն չի պահանջվում, բ) անհրաժեշտ տեղեկա-տվության կիրառմանը, գ)կատարված աշխատանքի արդյունավետության գնահատմանը:	Կատարել պարզ գործողություններ համակարգչային հայտնի ծրագրե-րով, Օտար լեզվով հասկանալ և օգտագործել ամենօրյա կիրառու-թյան արտահայտություններ, հաղոր-դակցվել, եթե զրուցակիցը խոսում է դանդաղ և հստակ, հարցնել և պատասխանել անձնական բնույթի հարցերին:
3	**Արհեստա վոր**	Աշխատանքի կամ ուսումնառության կոն-կրետ ուղղվածության բնագավառին առնչվող այնպիսի փաստերի, սկզբունքների, գործըն-թացների և ընդհանուր հասկացությունների իմացություն, որ պա-հանջվում են մասնա-գիտական գործունե-ություն իրականացնելու և միջին բարդության, ոչ շաբլոնային առաջա-դրանքները կատարելու համար:	Մի շարք ճանաչողական և գործնական հմտություններ, որոնք անհրաժեշտ են հիմ-նական մեթոդների, միջոց-ների և գործիքների, նյու-թերի ու տեղեկությունների կիրառման միջոցով առա-ջադրանքներ կատարելու և խնդիրներ լուծելու համար	Աշխատանքում կամ ուսման գործընթացում առաջադրանքների կատարման համար անձնական պատասխանատվության ստանձ-նում. որոշ դեպքերում ավելի ցածր որակավորում ունեցող աշխա-տողների կողմից կատարված աշ-խատանքի համար պատաս-խանատվության ստանձնում. խնդիրներ լուծելիս սեփական վարքագիծը հանգամանքներին հարմարեցնելու կարողություն: Կատարել պարզ գործողություններ համակարգչային հայտնի ծրագրերով, Օտար լեզվով հասկանալ պարզ նա-խադասություններ և իր մասնա-գիտության մասին հաճախ օգտա-գործվող արտահայտություններ:
4	**Միջնակարգ կրթություն**	Աշխատանքի կամ ուս-ման որևէ բնագավառի համատեքստում ունե-ցած փաստական և տեսական գիտելիքներ,	Մի շարք ճանաչողական և գործնական հմտություններ, որոնք անհրաժեշտ են աշխատանքի կամ ուսման որևէ բնագավառում	Կանխատեսելի, բայց փոփոխունակ միջավայրում սեփական աշխատան-քի կամ ուսման գործընթացները կազմակերպելու ունակություն, այդ գործընթացների գնահատման և

		որոնք պահանջվում են առաջադրված բարդ, ոչ շաբլոնային խնդիրները լուծելու և մասնագիտա-կան գործունեության իրականացման ընթաց-քում համընդգրկուն լու-ծումներ ու մոտեցումներ ընտրելու համար: Ունի փաստական և տեսական գիտելիքներ համակարգչային և տեղեկատվական միջոցներից:	մասնագիտական կոնկրետ խնդիրներին լուծում տալու, առաջադրանքների լրացու-ցիչ ուսումնասիրություն անց-կացնելու և գործածված մեթոդների ու ձեռք բերված արդյունքների արդյունավե-տությունը գնահատելու համար:	բարելավման համար պատասխա-նատվություն ստանձնելու ունակու-թյուն, այլ աշխատողների գործու-նեության կազմակերպում և վերահսկողություն՝ հարկ եղած դեպքում, այլոց վերապատրաստում որոշ հանգամանքներում : Համակարգչային հայտնի ծրագրերով աշխատելու ունակություն: Օտար լեզվով կազմում է պարզ կապակցված տեքստեր, որոնք կվերաբերվեն իր հետաքրքրություններին և ձգտումներին, հասկանալ ուսուցմանը կամ աշխատանքին վերաբերվող հարցերի շուրջ տարվող խոսակցությունները:
5	**Մասնագետ**	Աշխատանքի կամ ուս-ման կոնկրետ բնագա-վառին առնչվող համա-կողմանի, մասնագի-տացված, փաստական և տեսական գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են մասնագիտական գոր-ծունեության իրակա-նացման ընթացքում առաջադրված բարդ, ոչ շաբլոնային խնդիրները լուծելու, իսկ որոշ դեպքերում ընտրված լուծումները	Ճանաչողական և մասնագիտական գործնական հմտությունների ընդգրկուն մի շարք, այդ թվում՝ համակարգչային և տեղեկատվական տեխնիկայի օգտագործման, որ անհրաժեշտ է մասնագիտական գործու-նեության ընթացքում ծագած խնդիրների համար լուծում-ներ մշակելու և այդ խնդիր-ների լուծման ընթացքում կիրառված մեթոդների և գործողությունների վերջնար-դյունքը և	Փոփոխունակ միջավայրում սեփա-կան աշխատանքի կամ ուսման գործընթացները կազմակերպելու և ղեկավարելու ունակություն, հարկ եղած դեպքում՝ այլ աշխատողների գործունեության վերահսկողություն, նրանց զբաղվածության հետ կապված աշխատանքների կազմա-կերպում, որոշ դեպքերում՝ մաս-նակցություն նյութական պաշար-ների բաշխմանը: Օտար լեզվով կարող է հասկանալ մասնագիտական թեմաներին վերաբերվող տեքստերի հիմնական միտքը, կարող է քննարկել իր մասնագիտության տեխնիկական

		հիմնավորելու համար:	արդյունավետու-թյունը գնահատելու համար:	մանրամասները:

6	**Բակալավր**	Մասնագիտական աշ-խատանքի կամ ուսման կոնկրետ բնագավառին առնչվող մասնագիտա-կան, տեսական և գործնական խորը գի-տելիքներ, որոնք ան-հրաժեշտ են տեսու-թյունների ու սկզբունք-ների համընդգրկուն ըմ-բռնման, դրանց քննա-դատական գնահատ-ման ու կատարելա-գործման, տվյալ մասնա-գիտական ոլորտում առկա դպրոցների, ուս-մունքների, գիտաճյու-ղերի և ուղղությունների մասին իրազեկվածու-թյան, դրանց համեմա-տության և գործնական կիրառության համար:	Վարպետության և նորարա-ության մասին վկայող առաջանցիկ հմտություններ, որոնք անհրաժեշտ են աշ-խատանքի կամ մասնա-գիտական ուսման որևէ բնագավառում բարդ և անկանխատեսելի խնդիրներ լուծելու, բարդ ու համալիր տեղեկատվությունը քննա-դատաբար վերլուծելու և գնահատելու, պահանջվող ունակություններն ընտրելու, զարգացնելու և հարմարեց-նելու, մասնագիտական գոր-ծունեության ընթացքում ան-հրաժեշտ մեթոդներ գործի դնելու, այդ մեթոդները կա-տարելագործելու ու դրանց արդյունավետությունը գնա-հատելու համար: Համակարգչային և տեղեկա-տվական տեխնիկայից ազա-տորեն օգտվելու գործնա-կան հմտություններ, հայտնի ծրագրային փաթեթների գործնական տիրապետում:	Պատասխանատվության ստանձ-նում աշխատանքի և ուսման այն գործընթացների կազմակերպման ու կառավարման համար, որոնք կա-րող են հանգեցնել միջավայրի զգալի փոփոխությունների կամ զարգաց-ման. նախաձեռնության ցուցաբե-րում. որոշումներ կայացնելու ունա-կության դրսևորում նմանօրինակ գործողությունների իրականացման ընթացքում. աշխատանքի և ուսման գործընթացներում մյուս աշխատող-ների դերի որոշում. այդ գործընթացների և անհատների ու խմբերի շրջանում արհեստավար-ժության զարգացման համար պատասխանատվության ստանձ-նում. ինքնուրույնության դրսևորում աշխատանքի և ուսման ընթացքում. մասնակցություն նյութական պաշարների պլանավորման և բաշխման գործընթացին: Օտար լեզվով կարող է կազմել հստակ տեքստ, մասնագիտական թեմայի շուրջ: Կարող է քննարկել իր մասնագիտության տեխնիկական մանրամասները,ներկայացնել կարծիք և իր նպատակները:
7	**Մագիստրոս**	Մասնագիտական աշ-	Մասնագիտացված հմտութ-	Էական փոփոխությունների և զար-

		խատանքի կամ ուսման կոնկրետ բնագավառին առնչվող նեղ մասնագիտացված, արդիական, գործնական և տեսական գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են մասնագիտական այդ ոլորտում նոր հայեցակարգերի և սկզբունքների մշակման, ինչպես նաև տվյալ ոլորտի շրջանակներում կամ միջառարկայական տիրույթում առանցքային նշանակություն ունեցող գիտելիքների մասին տվյալների ու տեղեկությունների հավաքման համար:	յուններ, որոնք անհրաժեշտ են քննադատական վերլուծությունների, բարդ և համալիր տեղեկատվության գնահատման ու մեկնաբանման, մասնագիտացման ոլորտի մյուս ճյուղերից վերցված գիտելիքների ինտեգրման, հետագա հետազոտական աշխատանքների կատարման և այդ գործընթացի ժամանակ բարդ խնդիրների լուծման, տվյալ ոլորտում նորարարության, նոր գիտելիքների ու ընթացակարգերի մշակման, պահանջվող մեթոդների ու մոտեցումների ընտրության և մասնագիտացման ոլորտում անցկացված գործողությունների երկարաժամկետ ու կարճաժամկետ արդյունքների գնահատման համար: Համակարգչային և տեղեկատվական տեխնիկայից ազատորեն օգտվելու գործնական հմտություններ, հայտնի ծրագրային փաթեթների գործնական տիրապետում:	գացումների հանգեցնող գործըն-թացների մշակման ու պլանա-վորման համար պատասխանա-տվության ստանձնում, բարձր ինքնուրույնություն, բարդ և համալիր գործընթացների և առաջա-դրանքների նախաձեռնում և դրանց իրականացման վերահսկողություն, պատասխանատվություն նոր մե-թոդների ներդրման և մասնա-գիտական ասպարեզում զարգաց-ման համար, մյուս աշխատողների կատարած աշխատանքի վերահս-կողություն և նրանց առաջա-դիմության գնահատում, նրանց մասնագիտական ուսուցման և վե-րապատրաստման պլանավորում և կազմակերպում, ուղղակի մասնակ-ցություն նյութական պաշարների պլանավորմանն ու բաշխմանը: Օտար լեզվով կարող է կազմել հստակ, լավ կառուցված տեքստ մասնագիտական թեմայի շուրջ, նկարագրել իր փորձն ու իրադարձություններ, ներկայացնել իր կարծիքների և նպատակների հիմնավորումները:
8	**Հետազոտող (գիտական աստիճանը՝ գիտություն**	Կոնկրետ բնագավառին առնչվող առավել խորը և առաջանցիկ գիտելիքներ մասնագիտական ոլորտից և մյուս բնագա-	Մասնագիտական հմտություններ, որոնք անհրաժեշտ են գիտահետազոտական աշխատանք կատարելու նպատակով զանազան	Մասնագիտական ոլորտին վերաբերող գիտելիքների և փորձի ասպարեզում էական փոփոխությունների հանգեցնող գործողությունների ծրագրում և կազմակերպում, աշխատանքային

	ների թեկնածու)	վառներից, որոնք անհրաժեշտ են գիտահետազոտական աշխատանքի վրա հիմնված նոր հայեցակարգերի, սկզբունքների և տեսությունների մշակման համար՝ այդ թվում գիտելիքներ, որոնք կապահովեն համակարգչային և տեղեկատվական տեխնիկայից ազատորեն օգտվելու գործնական հմտություններ ու կարողություններ, հայտնի ծրագրային փաթեթների գործնական և ազատ տիրապետում:	բարդ գործոնների փոխազդեցու-թյան հետ կապված վճռորոշ խնդիրներ լուծելու, այդ աշխատանքի վրա հիմնված նոր սկզբունքներ և տեսություններ մշակելու, գիտելիքները և մասնագիտական փորձն ընդլայնելու և վերաիմաստավորելու տվյալ և այլ մասնագիտական բնագավառների սահմանագծում: Հետագա լուծումներ մշակելու և իրականացնելու, նոր մեթոդներ և մոտեցումներ մշակելու, մասնագիտական և հարակից ոլորտների շրջանակներում հեռանկարային և կարճաժամկետ գործողությունների արդյունքները գնահատելու ունակություն:	գործունեության ընթացքում բարձր ինքնուրույնություն ապահովելու, մասնագիտական ոլորտում բարձր հեղինակություն վայելելու, մյուս աշխատողներին ղեկավարելու և ուղղորդելու, նոր գիտելիքների ու մեթոդների տարածումը կազմակերպելու, նյութական պաշարները ինքնուրույնաբար ծրագրելու և բաշխելու կարողություն: Օտար լեզվով կարող է կազմել հստակ, լավ կառուցված տեքստ, մասնագիտական, սոցիալական և ակադեմիական թեմաների շուրջ, նկարագրել իր փորձն ու իրադարձություններ, ներկայացնել իր կարծիքների և նպատակների հիմնավորումները:

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ և ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

որոշման նախագծի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետությունը 2005 թվականին միացել է Բոլոնիայի գործընթացին, նպատակ ունենալով ապահովել ՀՀ բարձրագույն կրթության համակարգի ինտեգրումը Եվրոպական կրթական միասնական տարածքին:

Բոլոնիայի գործընթացի առանցքային բաղադրիչներից մեկը բարձրագույն կրթության որակավորումների համընդհանուր համակարգի ներդրումն է, որը նպաստում է մասնակից երկրների բարձրագույն կրթության համակարգերի համադրելիությանը, կրթության և տնտեսության փոխադարձ կապերի ամրապնդմանը, միջազգային մրցունակության բարձրացմանը և ուսանողների շարժունությանը: Այս նպատակով 2003 թվականին Բեռլինում կայացած կրթության նախարարների համաժողովում ընդունվել է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների համընդհանուր շրջանակը (The Framework of Qualification for the European Higher Area) և առաջարկվել է մասնակից պետություններին մշակել դրան համադրելի որակավորումների ազգային շրջանակ:

Միաժամանակ, 2008 թվականին Եվրոպական Խորհրդարանը և Եվրոհանձնաժողովը համատեղ հաստատել են Որակավորումների եվրոպական շրջանակը, որը ներառում է կրթության բոլոր մակարդակները և համադրելի է Բոլոնիայի գործընթացի շրջանակներում ընդունված բարձրագույն կրթության որակավորումների շրջանակին: Եվրոպական Խորհրդարանը և Եվրամիության Խորհուրդը կարևորում և երաշխավորում են Որակավորումների եվրոպական շրջանակը՝ որպես որակավորումների տարբեր համակարգերը համադրելու և աշխատաշուկայի հետագա ինտեգրումը խթանելու գործիք:

Այս գործընթացի շրջանակներում ՀՀ «Կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքներով սահմանվել են «որակավորում» և «որակավորումների ազգային շրջանակ» հասկացությունները, ինչպես նաև բաշխվել են որակավորումների բնութագրերի հաստատման լիազորությունները:

Սույն որոշման ընդունումը բխում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2[1]) կետի պահանջներից:

Արմեն Աշոտյան